

Դամբարանների պեղումներ Կիրովականում

«Տեղեկագիր» № 3—4 (8—9) 1941 թ., Երևան

Ա. Համբարձում Հայոց Պատմության
Տ. Համբարձում
9/11 Կ. Տ. Երևան

Ա. Դաֆադարյան

ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԿԻՐՎԱԿԱՆՈՒՄ

1935 թվի հունիսի 9-ին Պատմության և Գրականության ինստիտուտը կիրովականից մի գրություն ստացավ, որով հաղորդվում էր, թե այնտեղ կատարած հողային աշխատանքների միջոցին բացվել են հնություններ, որոնք նման են դամբարանների:

Բացված հնությունները «քարարկղյա» դամբարաններ էին, որոնց երեսի սալքարերը երևալուն պես հողային աշխատանքները դադարեցված և դամբարաններն անաղարտ վիճակում պահված էին մինչև մեր գնալը:

Վ.Յ.Յ.՝ Բացված դամբարանները գտնվում էին կիրովականից (Լոռու Դարաքիլիսա) 1,5 կիլոմետր դեպի արևելք, Դիլիջան տանող խղճուղու, Դարփի-չայ գետակից մոտ մի կիլոմետր դեպի հյուսիս ընկնող սեղանաձև բարձունքի հյուսիսային լանջի վրա, որի հյուսիսային ձորակով անցնում է Յաղուրլի գյուղի ճանապարհը: Այդ մասը կոչվում է «Դիմացի թաղ»:

Մինչև մեր գնալը հայտարերված էին միայն երեք դամբարան, որոնցից ամենահարավային կետում գտնվողը համարագրեցինք իրեն առաջին: Մրանից 2,60 մ դեպի հյուսիս-արևելք ընկած էր № 3 դամբարանը, № 1-ից 2,60 մ դեպի հյուսիս և № 3-ից 3,0 մ դեպի հյուսիս-արևելք ընկած էր № 2-ը:

Այդ երեքը պեղելուց հետո սկսեցինք նոր դամբարաններ որոնել, որի հետեւանքով բացվեց № 4-ը: Վերջինս գտնվում էր № 2-ից 4,20 մ դեպի հյուսիս-արևելքուտք, իսկ № 5 դամբարանը հայտարերեցինք № 4-ից 48 մ դեպի արևելք ընկնող տեղում:

Այդ սարալանջին աստ ու անդ գետնի վրա երևում էին մի քանի սալքարեր, որոնք, ամենայն հավանականությամբ, դամբարանների ծածկեր էին, բայց ժամանակ չունենալու պատճառով չկարողացանք շարունակել պեղումները և բարականացանք միայն վերոհիշյալ 5 դամբարանների պեղմամբ:


Այս սարալանջը, ինչպես նաև նրանից 3 կմ դեպի հարավ-արևելք գտնվող Վարդանլուի սովորողի շենքերի բոնած տարածությունը¹ պետք է

¹ Որտեղ 1933 թվին պեղել ենք 17 դամբարան:

պահպանվեն որպես հարուստ հնավայրեր՝ հետազայռում լայն չափով պեղումներ կատարելու համար:

ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՕՐԱԳԻՐԸ

ԴԱՄԲ. № 1. Արտաքին նշաններ՝ չուներ: Խորությունը՝ 1,15¹, բարձրությունը՝ 1,06, ծածկի սալի տակից: Երկարությունը՝ 1,36: Լայնությունը՝



Դ. 1 դամբապանի ընդհանուր տեսքը՝ պեղումների ժամանակ

¹ Չափումները հաշվված են մետրով:

1,06: Ուղղությունը՝ հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք։ Ծածկը՝ մի մեծ բնական սալքար, կողքերին դրված մի քանի մանր քարեր։ Պատերը՝ երեք կողմից մեկական մեծ սալքարեր՝ կողերի վրա, իսկ հարավ-արևելյան պատը՝ չպալված մանր քարերով, դամբարանի համար իրրե մուտք էր ծառայել։ Հատակը՝ քարախառն ավագ։

Պեղման նկարագիր.— Դամբարանի հյուսիսային անկյունում դրված փոքրիկ քարը վերցված էր և ներսում երեսում էին 8 կավե ամաններ։ Դամբարանն սկզբնական շրջանում հողով լցված չի եղեւ, իսկ հետագայում՝ քարերի արանքից, խոնավության հետ միասին ներս էր թափանցել չափազանց բարակ հող և դամբարանի հատակում գոյացել $0,20-0,40$ -ի հասնող մի շերտ, որը անկյուններում և ընդհանրապես ծածկի քարերի արանքների տակին ավելի հաստ շերտ էր կազմում, քան մնացած մասերում։

Պեղումներն սկսեցինք վերևից, շերտ առ շերտ հողն իջեցնելով։ Այդ շերտերից յուրաքանչյուրի հաստությունը պայմանավորված էր երեսող ամանների՝ հողի մեջ թաղված լինելու չափով։


Դամբարանում կային մանր ու խոշոր 36 կավե ամաններ, որոնց դասավորությունը որևէ սիստեմի վերագրելու մեր բոլոր ջանքերը մնացին ապարդյուն, որովհետեւ նրանք այնքան շատ էին, որ դամբարանի ամբողջ տարածությունն էին բռնում և շատերն էլ իրար վրա էին դրված։ Բացառությամբ կողքի ընկած մի քանիսի, բոլոր տմանների բերաններն ուղղված էին դեպի վեր և մի քանիսի մեջ էլ անասունների ոսկորներ կային։ Սակայն մի բան պարզվեց, որ սկզբնական շրջանում խեցեղենը դրված պիտի լիներ կմախքից աղատ մնացող տարածության վրա։

Հատակի ավագութիւնը վրա կար մի տղամարդու կմախք, որի՝ ամանների ծանրության տակ ջարդված գանգը գտնվում էր հյուսիս-արևելյան պատի մեջտեղում, մի տափակ քարի վրա։ Գանգի ոսկորներից համեմատաբար լավ էին մնացել տուամներն ու ականջին մոտեցող մասերը։ Կմախքը պառկած էր հյուսիսից դեպի հարավ, ձախ կողքի վրա կուչ եկած վիճակում՝ ծալված ձեռներով և ոտներով։

Կմախքի գոտկատեղի արևելյան կողմում գտնվեց մի բրոնզե դաշույն, որի բրոնզե տանձածե երախակալը գտանք դամբարանի արևմտյան անկյունում։ Կմախքի աջ ձեռի ոսկորների մոտ գտանք բրոնզե մի ապարանջան։

Դամբարանի հարավ-արևելյան պատին զուգահեռ, ոլառկած, կուչ եկած վիճակում՝ ձախ կողքի վրա ընկած էր մի եղան կմախք, որի գլուխը գտնվում էր դամբարանի արևելյան անկյունում։

ԴԱՄԲ. № 2. Արտաքին նշաններ՝ չուներ։ Խորությունը՝ 1,10։ Բարձրությունը՝ 0,68։ Երկարությունը՝ 1,20։ Լայնությունը՝ 1,03։ Ուղղությունը՝ նախորդի ձեռով՝ հյուսիս-արևելքից դեպի հարավ-արևմուտք։ Ծածկը՝ 2 մեծ բնական սալքարեր, իսկ արանքներում՝ ավելի մանրերը։ Պատերը՝ երեք կողմից մեկական մեծ սալքարեր՝ կողերի վրա դրված, իսկ հյուսիս-արևմտյան կողմից՝ մուտքը, որը ծածկված էր որմնաքարերի շարվածքով։ Վերջինիս մոտ սեահող շերտն իջնում էր մինչև դամբարանի բերանը, իսկ մնացած մասերում նա միայն $0,48$ հաստություն ուներ։ Հատակը՝ քարախառն ավագ։



№ 2 դամբարանի ընդհանուր տեսքը՝ պեղելուց հետո:


Պեղման նկարագիր.—Այս դամբարանը, նախորդի նման, սկզբնական շրջանում հող չի ունեցել, բայց խոնավության հետ, ժամանակի ընթացքում, թափանցել էր $0,20 - 0,40$ հող:

Դամբարանի հյուսիս-արևելյան մասում դրված էին ու կավե 8 մեծ ու փոքր ամաններ՝ բերանով դեպի վեր, որոնց մի քանիսի մեջ կային անասունների ոսկորներ: Մարդկային կմախքը պառկած էր ձախ կողքի վրա, կուչ եկած վիճակում, գլուխը հարավ-արևելյան պատի մոտ, իսկ իրանը դեպի հյուսիս-արևմուտք: Կմախքի աջ բաղկոսկրի վրա կար մի բրոնզյա ապարանջան, որը, ժանդից փչացած լինելու պատճառով, 2 մասի էր բաժանվել:

ԴԱՄԲ. № 3. Արտաքին նշաններ՝ չուներ: Խորություն՝ 1,0: Նրկարություն՝ 1,5: Լայնություն՝ 1,27: Ուղղությունը՝ հյուսիսից դեպի հարավ-ծածկը՝ 2 մեծ սալքարեր: Պատերը՝ հյուսիսայինը՝ մի մեծ սալքար, արևմտյանը՝ 2 իրար կողքի դրված սալքարեր, արևելյանը՝ 3 սալքարեր, որից հետո դամբարանը նեղանում էր և հարավային մասում վերջա-

Նում մի փոքրիկ սալքարով, որը դամբարանի համար իրեն մուտք է ծառայել։ Հատակը՝ դեղնավուն կավե հիմնահողի շերտը։

Պեղման նկարագիր.—Սկզբնական շրջանում հող չի ունեցել, բայց հետագայում բարձրության կեսը լցվել էր բարակ հողով։



№ 3 դամբարանի ընդհանուր տեսքը՝ պեղելուց հետո։

Դամբարանի հատակին, կմախքներից ազատ մնացող տեղերում գրված էին սև կավից շինած 23 մեծ և փոքր ամաններ, որոնցից մի քանիսի մեջ կային անասունների ոսկորներ։ Հյուսիսից դեպի հարավ, ձախ կողքի վրա պառկած էին 2 մեծահասակների կմախքներ, որոնց մոտ ոչ մի իր չգտնվեց։ Մրանց սեռը չկարողացանք որոշել, որովհետև ոսկորներն արդեն քայլավել էին և փոշիացել։ Արևելքից դեպի արևմուտք, դարձյալ ձախ կողքի վրա, կուչ եկած վիճակում, պառկած էր մի կնոջ կմախք, որի հարավային կողմում, այսինքն կնոջ գրկում, կար նույն դիրքով պառկած մի երեխայի կմախք։ Կինն ուներ բազմաթիվ զարդարանքներ—134 սարդիոնե, 38 կարմիր մասույից պատրաստած, 169 ծարիրե և 36 բրոնզե ուլունքներ, երկու ծարիրե պանդըլոքներ, 2 ծարիրե մեղալյոններ՝ խաչի և սվաստիկայի նշան-

ներով, բրոնզե ասեղ, ծարիքե կոճակներ և այլն, որոնք դտնվում էին կմախքի կրծքին մոտիկ մասերում, մինչև որովայնի մոտերքը:

Դամբարանի տրեմտյան պատին զուգահեռ, կորացած ողնաշարով և ծալված ոտներով, ձախ կողքի վրա պառկած էր եղան ամբողջ կմախք:


ԴԱՄԲ. № 4. Արտաքին նշաններ՝ չուներ: Խորություն՝ 0,50: Բարձրություն՝ 0,77: Երկարություն՝ 1,20: Լայնություն՝ 0,91: Ուղղություն՝ հյուսիսից հարավ: Ծածկը՝ երկու սալքարեր: Պատերը՝ չորս սալքարեր, յուրաքանչյուր կողմի վրա մեկ հատ: Հատակը՝ գեղին հիմնահող:

Պեղման նկարագիր.—Սկզբում, մյուսների նման, հող չէր ունեցել, բայց ծածկի քարերը չէին կարողացել ապահովել ներսը, ուստի ժամանակի ընթացքում հողն այնքան էր մաղվել դամբարանի մեջ, որ դատարկ տարածություն չէր մնացել բոլորովին:

Այս դամբարանն ուներ տարբեր մնձության 9 կավե ամաններ, որոնք շարված էին դամբարանի հյուսիսային կողմում: Նրանցից մեկում, և 3-ում, դտանք մի բրոնզե նիզակի ծայր և մի բիզ:

Այս դամբարանում կմախքը ոչնչացել էր, միայն հյուսիսարևելյան անկյունում գտանք մարդկային ատամներ, որոնք դրված էին մի տափակ քարի վրա, որից և ենթաղբեցինք, թե կմախքը՝ սկզբնական շրջանում, պետք է պառկած լիներ ձախ կողքի վրա, կուչ եկած վիճակում, մանավանդ որ այս դամբարանում դտնվեց նաև մի եղան կմախք, ձախ կողքի վրա պառկած՝ արևելյան պատի տակ:

ԴԱՄԲ. № 5. Արտաքին նշաններ՝ չուներ: Խորություն՝ 0,40: Բարձրություն՝ 0,70: Երկարություն՝ 1,05: Լայնություն՝ 0,65: Ուղղություն՝ արևել-



№ 5 դամբարանը պեղման միջոցին:

քից արևմուտք: Ծածկը՝ երկու սալքարեր: Պատերը՝ յուրաքանչյուր կողմի վրա մի սալքար: Հատակը՝ դեղնավուն հիմնահողի շերտը:

Պեղման նկարագիր.—Դամբարանն ամբողջապես լցված էր կոշտ հողով: Կմախքն սկզբնական շրջանում նստած վիճակում է եղել, բայց հետագայում գլորվել և կողքի էր ընկել: Կողքերին շարված էին 5 կավե ամաններ, որոնցից մեկը մնացել էր ծնոտի տակ և մեկն էլ կողերի ոսկորների տակ: Վերջինս միակ ձեռագործ ամանն էր, որը շատ վատ էր թրծված, այլ ձեռագործ ամաններ չգտնվեցին:

Այս դամբարանն սկզբում հող չի ունեցել, բայց հետագայում ծածկի սալքարը կողքի է գնացել, որի հետեւանքով էլ դամբարանը լցվել էր հողով: Մարդու կմախքն ամենից լավ պահպանվել էր այս դամբարանում:

Հյուսիսային անկյունում, հատակից 0,35 մ վրա, սալքարերի արանքից գտնվեց մի բրոնզյա տերևաձև նիզակի ծայր՝ ծոված վիճակում:

ՊԵՂԱԾ ԻՐԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Գործիքներ և գենֆեր.—Գտնված դենքերի ու գործիքների մեծ մասը բրոնզից է, քարե կամ երկաթե իր չգտնվեց: Մետաղյա իրերի քանակը թեև քիչ է, բայց նրանց արժեքը չափազանց մեծ է, որովհետեւ բոլորն էլ արխայիկ ոճի իրեր են, որոնք կամ շատ հազվադեպ են և կամ առաջին անգամն են գտնվում:

№ 1 դամբարանից գտնվեց բրոնզյա դաշույնի մի շեղք: Շեղքի վերջավորությունից մինչև նրա ծայրը երկու երեսից էլ մի հարթաձև բարձրություն է անցնում, որը շեղքի ծայրի մոտ ավելի է նեղանում և ցածրանում: Շեղքի վերջավորության մոտ 2 փոքր ծակեր կան՝ շեղքը կոթին գամելու համար: Երկարությունն է 21,5 սմ, լայնությունը՝ 3,2 սմ—մեջտեղում, իսկ վերջավորության մոտ նա լայնանում է մինչև 6,2 սմ: Դաշույնի այս ձեր համարվում է հնագույնը, որի նմանը գտել է Ե. Լալյանը Ն. Բայազետի Փաշաքյանդ գյուղի մոտ¹: Մի նմանն էլ Լենքորանի քարարկղյա դամբարաններից պեղել է Ժ. Պը Մորգանը²: Վերջին դաշույնի մասին ինչպես ինքը՝ պեղողը, նույնպես և Պասեկ ու Լատինին հնագետները կարծիք են հայտնելու որ թեև նա ձեռվ արխայիկ է, բայց հնի մնացորդ է և գործադրվել է նոր ձեռին զուգահեռաբար³:


Մեր պեղած վերոհիշյալ դամբարանում գտնվեց նաև այդ դաշույնի երախակալը, որը տանձի ձեւ ունի, գլխին քառակուսի անցք կա, իսկ փայտե ընին հագնելու տեղում՝ կլոր մեծ անցք: Փորի վրա ունի հինգ մեծ կլոր ելուստներ, որոնք մի շրջան են կազմում նրա ուսուցիկ մասի վրա: Այս երախակալի նմանը գտել է Ե. Լալյանը, բայց թե որտեղ է գտել, այդ մասին չի հիշատակում իր աշխատակում մեջ⁴:

¹ Ե. Լալյան—Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում:

² J. de Morgan—*Préhistoire Orientale*, t. III-e, p. 203, fig. 197.

³ Пасек и Латынин—Очерки до истории Северного Азербайджана. Известия об-ва обследования и изучения Азербайджана, в. III, стр. 132.

⁴ Ե. Լալյան—Դամբարանների պեղումներ Խ. Հայաստանում, էջ 161, նկ. 117: Իրն այժմ գտնվում է ՀՍՍՌ Պատմական թանգարանում:



Նկ. 5. Հայտաբերված զենքեր և գործիքներ. — բրոնզե դաշույն՝ № 1 դամբարանից,
գեղարդ՝ № 5 դամբարանից, հերուն՝ № 4 դամբարանից, ասեղ՝ № 3 դամբարանից,
դաշույնի գլուխ՝ № 1 դամբարանից (նկարված տարբեր կողմերից):

№ 4 դամբարանում գտնվեց մի բրոնզե նիզակի տերևաձև ծայր, որի
կոթառն ինքն է մտած եղել փայտե կոթի մեջ։ Նիզակի հարթ լեզվակի
երկարությունը 9,0 սմ է, որից հետո լեզվակի հիմքն ուռուցիկ է դառ-
նում։ Կոթառն ունի 7,6 սմ երկարություն և մեխի նման կլոր է, որի
վերջավորությունը տափականում է։ այդ տափակ տեղի մեջտեղում կա մի
ծակ՝ նիզակը փայտե կոթին գամելու համար։ Նիզակի այդպիսի տիպ մեզ
ծանոթ չէր մինչև այժմ։ № 5 դամբարանում գտնվեց մի այլ նիզակի բրոն-
զե ծայր, որի կոնաձև ու սնամեջ կոթառն ինքն է հաղնվել փայտե ձողի
վրա։ Սրա կոթառը, որ տերևաձև լեզվակի վրա վերևից մինչև ծայրն է
հասնում, լեզվակից հետո շատ կարճ է, նիզակի ծայրի 16,0 սմ ընդհանուր
երկարության մեջ բռնում է միայն 7,0 սմ։ Այդպիսի կարճ կոթառ ունե-
ցող նիզակը համարվում է հնագույնը։ Կոթառի մեջտեղում երկու կողմից
մեխելու համար կան 2 ծակեր, որոնք ընկած են ուղիղ իրար դիմաց։

№ 3 դամբարանում գտնվեց մի բրոնզե հերուն՝ 7,8 սմ երկարությամբ,
որի բութ ծայրը նեղանում և կլորանում է, իսկ ընդհանուր առմամբ քա-
ռանկյունի է։ Նման հերուն գտել է Իվանովսկին Գանձակի գավառում¹ և

¹ Материалы по археологии Кавказа, вып. VI, табл. IX, рис. 7.

Ե. Լալայանը՝ տեղը չի հիշատակում¹: Ա Յ Յ Պամբարանում գտնվեց նաև մի գլանաձև բրոնզե ասեղ՝ 8,2 սմ երկարությամբ, որը, սակայն, որևէ նորություն չի մտցնում եղածների շարքում:

ԿԵՐԱՄԻԿԱ.—Գտնվեցին 81 կավե ամաններ, որոնցից 80-ը շինված էին գրդի վրա և միայն մեկն էր ձեռագործ ու վատ թրծած: Բոլոր ամանները սև կավից են և, բացի մի քանիսից, մյուսները փայլեցրած չեն: Ն 1 դամբարանը ունկորդային թվով կավե ամաններ էր պարունակում՝ 36 հատ: Միայն մի դեպք է մեզ ծանոթ, երբ նույն չափով ամաններ են եղել մի դամբարանում²:

Մեր պեղած ամանները ստորաբաժանվում են հետեւյալ տեսակներին:—Խնոցիներ պորտածակով—3 հատ՝ 30×30 միջին մեծությամբ: Գավ—4 հատ, պնակ—2, մնացածները տարբեր մեծության նույնատիպ կճռաներ են:

Ամանների մեծագույն մասը օրնամենտներ չունեն: Ունեցողների մեծագույն մասն էլ միայն շրջան կազմող հասարակ գծեր ունեն, որոնց թիվը յուրաքանչյուր ամանի վրա 1-ից 6-ի է հասնում: Միայն 9 ամաններ ունեն քիչ թե շատ զարդարանքներ, որոնք դարձյալ մի առանձին բարդություն չեն ներկայացնում և արված են ձեռքով ու սրածայր գործիքով: Նրանցից մի քանիսն ունեն օձաձև անկանոն կոր գծեր, որոնք փակ շղթա են կազմում, կամ մանր փոսիկներ՝ կետերի և ստորակետների ձևով, սրածայր ալիքներ և եռանկյունաձև զուգահեռ գծեր և կամ ուռուցքներ:

ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ.—Զարդարանքների մեջ ամենից ուշագրավը չորս մեղալյոններն են, որոնց բոլորի երեսին խաչի նշաններ կան:

Խաչի նշանը ծանոթ է եղել Հայաստանի նախաբնիկներին: Ժ. Դը Մորդանը գտել է հինգ տիպի խաչեր (իր գրքի Ն 172—176 նկարներ, էջ 159), որոնցից երկուսը՝ բրոնզե գոտու վրա (Մուսի Երի), մեկը՝ սև կավե պնակի հատակին (նույն տեղում), մնացած երկուսը՝ մեղալյոնների վրա (Մուսի Երիում և Շեյթան-դաղում): Վերջիններիցս մի տեսակը անագից է և գտնվել է ուլունքների հետ շարված վիճակում: Մորդանը Շեյթան-դաղում գտել է նաև $2,5 \times 2,9$ մեծության միրրոնզե մեղալյոն՝ խաչի նշանով:

Մի մեղալյոն՝ խաչի նշանով, պեղել է Ե. Լալայանը Աղիամանում (Ն. Բայազետ):

Այս բոլոր գյուտերը ցույց են տալիս, որ խաչի նշանը Հայաստանի նախաբնիկների մեջ շատ տարածված է եղել: Մեր գտած մեղալյոնները խաչակիր երեսի կենտրոնում կոր բշտիկներ ունեն, որոնք համընկնում են նաև խաչի կենտրոնին: Մեծ մեղալյոնը խաչի յուրաքանչյուր թեր մեջտեղում ունի մի բշտիկ, իսկ լայնաթև խաչի



Նկ. 6. Մարիբե
մեղալյոն՝ Ն 3
դամբարանից:

¹ Ե. Լալայան — Դամբարանների պեղումներ Մորհրդային Հայաստանում, էջ 182, նկ. 261:

² Անգլորանի Թալիշում J. de Morgan-ի պեղած դամբարաններից մեկում եղել են 36 կավե ամաններ (Prehistoire orientale. t. III, p. 267, fig. 248).

արանքներում, նրա թևերին՝ զուզահեռական ուռուցիկ գծեր, որոնք գեղեց-կացնում են մեղալյոնը: Կանթը, որով կախված է եղել մեղալյոնը, ընկնում է խաչի թևերից երկուսի արանքում, այսպիսով, կախված մեղալյոնի վրա խաչը եղել է ոչ թե ուղիղ դիրքով՝ վերից ներքեւ և հորիզոնական թևերով, այլ թեք: Երկու փոքր մեղալյոնների մեկական երեսները զարդարված են խաչով, իսկ հակառակ երեսները բոլորովին հարթ են: Մեր գտած չորս մեղալյոններն արժեքավոր են նաև նրանով, որ նրանց մետաղը քիչ պատահող ծարիրն է (անտիմոն):

Ծարիրը ծանոթ է եղել Հայաստանի նախարնիկներին և նրանց թանգարժեք մետաղն է համարվել:

Օրինակ՝ Իվանովսկին Գանձակի գավառում գտել է ծարիրյա հետևյալ իրերը. մի ինչ-որ իրի կտոր՝ շրջանաձև նշաններով (№ 12 դամբարանից), 8 հատ քառանկյունի թիթեղ՝ նշանով (№№ 38 և 87 դամբարաններ), 7 հատ մեղալյոն՝ այծի քանդակներով (№ 12 և 28 դամբարաններ) և 2 կոճակ (№ 14 դամբ.):

Ընկ. Առ. Լիսիցյանը Զանգեղուրից բերել է ծարիրյա գոտու հատվածներ, որոնք գյուղացիները գտել են մի դամբարանում (Անգեղակոթ գյուղի մոտ): Ռուլերը Գանձակում գտել է ծարիրյա ուլունքներ:

ՈՒԼՈՒՆՔՆԵՐ.—Սարդիոննե ուլունքները ոչ մի նորություն չեն բերում, որովհետեւ նրանք սովորական են այս տիպի դամբարաններում և շատ են գտնված այլեւայլ տեղերում: Սրանք գլանաձև ու գնդաձև են: Գտնվեցին նաև ավելի փոքր մեծության, կարմիր մասսայից պատրաստած գլանաձև ուլունքներ, որոնք նույնպես սովորական են նման դամբարանների համար: Մեզ համար մեծ նորություն էին ոսպաձև ծարիրյա ուլունքները, որոնցից գտնվեց մոտ 150 հատ. սրանց ճիշտ նմանը կային և ուկորից դառնվեցին նաև 2 հատ ծարիրյա մեծ ուլունքներ, որոնք ծակված են հաստության միջից և նման են կոճակների:

Մնացած դարդարանքների մեջ հիշատակության արժանի են բրոնզյա մատանիները և ապարանջանները, որոնք սովորական են անդրկովկասյան նույնատիպ դամբարաններում:

ՊԵՂՎԱԾ ԴԱՄԲԱՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՂԸ «ՔԱՐԵ ԱՐԿՂՆԵՐԻ» ՍԻՍՏԵՄԻ ՄԵջ

Մեր պեղած հինգ դամբարաններն էլ պատկանում են Հայաստանի հնագույն թաղումների ամենաբազմօրինակ ձևերից մեկին, որն ընդունված է կոչել «քարե արկղներ»: Ընդհանրապես նրանք կառուցված են լինում 5—6 սալքարերից, որոնցից 4-ը դրված են լինում չորս կողմերում՝ կողերի վրա, և մեկը կամ երկուսը նրանց ծածկում են վերևից:

Հնագետներից ոմանք նկատել են, որ «քարե արկղների» սիստեմը սրու էվոլյուցիա է ապրել: Դեռևս Բայերնը նկատել է, որ նրանց մեջ կան այնպիսիները, որոնց 3 կողմերը կաղմվում են երեք անտաշ սալքարերից, իսկ մի կողմից ունեն բացվածք, որտեղով ննջեցյալին դամբարանի մեջ են դրել և ապա անցքը փակել որմնաքարերով¹:

¹ Fredrik Bauerne. — Contribution à la archéologie du Caucase, précédée, d'une introduction biographique par E. Chantre, Lyon, 1882.

Բոլոր պեղողների կարծիքով՝ «Քարե արկղների» այս տիպը հնագույնն է: Նոր տիպերն արդեն չորս կողմերից էլ մեծ սալքարերով են պատված լինում, որոնց մեջ ննջեցյալին իջեցնում էին վերեկից և ոչ կողքից^{1:}

Ժակ զը Մորգանը, որ Հայաստանում պեղել է 1056 դամբարան, ժամանակագրական դասակարգման մեջ հնագույն տեղը տալիս է այն տիպին, որը նա անվանում է „Tombeaux de grande taille à armes de bronze et de fer.— Localité: Redkine-lager, Djalall-Ogli sépulture isolé d' Akthala^{2:}, այսինքն «գերեզմաններ ահապին մեծության: Ննջեցյալին մտցրել են կողքից: Զենքերը՝ բրոնզից և երկաթից: Տեղը՝ Ռեդկին-լագեր, Զալալ-օղլի: Մի քանի առանձնացած դամբարաններ՝ Ախտալայում»:

Մեր պեղած դամբարաններից 3-ն այդ տիպին էին պատկանում: Նրանց 3 կողմերի վրա դրված էին մեկական մեծ սալեր, իսկ չորրորդ կողմից մուտքն էր, որը շարված էր որմնաքարերով: Դամբարաններից 5-ն էլ հող չհնունեցել, № 5-ը տարբերվում էր միայն նրանով, որ սրա մեջ կմախքը նստած վիճակում էր գտնվում, այնինչ, մնացած չորսի մեջ կմախքները պառկած էին:

Դամբարանների ուղղությունը հյուսիսից հարավ էր, բայց երբեմն էլ հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք:

ԿՈԼԵԿՏԻՎ ԹԱՂՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բայերնը Ռեդկին-լագերում գտել է մի քարարկղյա դամբարան, որի մեջ պառկած է եղել մի մոր և մի երեխայի կմախք^{3:}

Մորգանը Շեյթան-դաղում պեղել է քարարկղ դամբարան (№ 104), որի մեջ պառկած են եղել 2 կմախքներ, մեկի գլուխը հարավային կողմում, իսկ մյուսինը՝ հյուսիսային^{4:}

Լեռնային Դարաբաղում Իվանովսկին պեղել է մի կուրգան, որն ունեցել է 3 մարդկային և 2 ուղտի կմախքներ^{5:}

Սևանա լճի ափերին՝ Ն. Բայազետի և Մարտունու շրջաններում՝ Ե. Լալայանը պեղել է բազմաթիվ կուրգաններ, որոնք պարունակել են համայնական թաղումներ:

Այս կուրգանների ներսը քարարկղյա դամբարաններ են՝ ավելի մեծ չափերի, որտեղ տեղավորված են լինում սովորաբար մի տղամարդու և մի կնոջ կմախք, լինում են նաև երեխաների կմախքներ: Կմախքների այս

¹ «Քարե արկղներն» իրենց գոյությունը շարունակել են նաև քրիստոնեական շրջանում: Բայց սրանք էապես տարբերվել են հնագույններից: Քրիստոնեական շրջանի քարարկղները փոքր ու նեղ են, իրեր չեն պարունակում և արկղը կազմող քարերը լավ տաշված ու հղկված են, նման 28 դամբարաններ պեղել ենք Լենինականի հապս գյուղի սահմաններում:

² J. de Morgan. — Mission scientifique au Caucase. Études Archéologiques et historiques t. I-er, p. 86.

³ Ե. Լալայան—«Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում», էջ 6:

⁴ Mission scientifique au Caucase. XI, p. 54—55 fig 15.

⁵ Материалы по археологии Кавказа, вып. VI, стр. 157—164.

խումբն ունենում է դարդարանքներ, զենքեր և գործիքներ: Նույն դամբարանում, պատերի տակ շարքով պալղած են լինում ծառաների կմախքներ՝ երբեմն գլխատված, երբեմն էլ դամբարանի մեջ դլխիվայր ընկած:

Այս տիպի համայնական թաղումները «քարե արկղների» սիստեմի մեջ հնագույն տեղն են գրավում, սրանց ավելի դարդացած տիպը, այսպես կոչված նրանց անհատական թաղման էտապը, կուրզաններ չի ունենում:

Համայնական թաղումները կարելի է ստորաբաժանել երկու տեսակների. ա) մայր ու երեխա և բ) բաղմամարդ:

ա) Ամենայն համանականությամբ՝ երեխայով միասին կնոջ դամբարաններն արդյունք են մոր մահվանից հետո երեխային մեռցնելու սովորության, որը հատուկ էր նախնադարյան կենցաղով ապրող բաղմաթիվ ժողովուրդների: Այդ սովորությունը նրանց կենցաղում առաջացել էր գոյության դաժան պայմանների հետևանքով, քանի որ մոր մահվանից հետո երեխան, առանց նրա կաթի, երկար չէր կարող ապրել:

Մոր և երեխայի համատեղ թաղումներն արդյունք են արտադրողական ուժերի դարդացման ցածր աստիճանի, երբ համայնքն ի վիճակի չէր ծնված բոլոր երեխանների կերակրման ու դաստիարակության գործն ապահովելու և այդ պատճառով սահմանափակ թվով երեխաններ էին պահում:

Այս սովորությունն ունեն նաև նախնադարյան կենցաղով ապրող բաղմաթիվ ժողովուրդներ: Օրինակ՝ ավստրալիացիներն սպանում են իրենց երեխաններից շատերին, որպեսզի տեղից տեղ շարժվելու հնարավորություն ունենան: Նոր-գվինեացիք երկուսից ավելի երեխաններին մեռցնում են: Նույն սովորությունն ունեին նաև էսքիմոսները հնում, Ամերիկայի և Աֆրիկայի բնիկները և այլն: Այս ձեռվ նրանք իրենց բնակչության թիվը են կարգավորում, ինարկե ելնելով իրենց տնտեսական հնարավորություններից: Երեխաններին մեռցնելու սիստեմն ընդունված և օրինականացված է եղել նաև Սպարտայում ու Հռոմում:

Այսպիսով, Հայաստանի նախարհիկների մեջ մոր և երեխայի համատեղ թաղումները պետք է վերագրել ոչ թե պատահականության, երբ մայրն ու երեխան միասին էին մեռնում, այլ դա, անկասկածորեն, մոր մահվան դեպքում երեխային սպանելու սովորության արդյունք էր: Զարդը է մոռանալ, որ երեխան մինչև չափահաս և ինքնուրույն դառնալը գտնվում էր մոր խնամքին, նրա հոգատարության տակ և մոր մահից հետո սպանում էին ոչ միայն ծծելը երեխաններին, այլև նրանցից ավելի մեծահասակներին¹:

բ) Բաղմամարդ թաղումների մեջ կենտրոնական տեղը գրավում են մարդ ու կինը, որոնց հետ, անկյուններում պալղած վիճակում, թաղված են լինում նաև այլ անձնավորություններ:

Այսպիսի դամբարաններ, որոնցով շատ հարուստ են Նոր Բայազետի և Մարտունու ծովափնյա շրջանները, պեղել է Յ. Լալայանը՝ 1906—1908 թ.թ. ընթացքում:

Բնական է, որ մարդ ու կինը, ինչպես նաև մնացած անձինք, միա-

¹ Մեր գյուղերում մինչև 7 տարեկան ծծելըներ կան:

սին չէին կարող մեռնել իրենց բնական մահով, այլ պետք է ընդունենք, որ նրանցից մեկի մահվան հետևանքով սպանված և նրա հետ թաղված են մնացածները:

Տղամարդու մահվան դեպքում կնոջն սպանելու և նրա հետ թաղելու մասին բավականաչափ գրավոր և հնագիտական տեղեկություններ կան Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի վերաբերյալ: Թաղման այս ձեւը բոլոր ժողովուրդների մեջ մի ընդհանուր նմանություն ունի—դա այն է, որ ամեն մի տղամարդու մահվան դեպքում կնոջը չեն սպանել, այլ այդ երեսութը հատուել է եղել միայն իշխանական և առհասարակ բարձր դիրք ունեցող անձնուվորություններին:

Հենց այն հանգամանքը, որ տղամարդի հետ, բայցի կնոջից, թաղված են լինում նաև 3-ից մինչև մի քանի տասնյակների հասնող, զարդեր ու զենքեր չունեցող և շատ դեպքերում էլ գլխատված տղամարդիկ, այսինքն ստրուկներ, ցույց է տալիս, որ մահացածը մեծ կարողության տեր է եղել և բաղմաթիվ ծառաներ ու ստրուկներ է ունեցել:

Այս սովորությունն ունեցել են նաև հայերը՝ հեթանոսության շրջանում: Խորհնացին, Արտաշես հայոց թագավորի թաղման նկարագիրը տալու ժամանակ, չի մոռանում հիշատակել, թե՝ «Որչափ ամբոխութիւնք մեռան ի մահուանն Արտաշիսի, սիրելի կանայք և հարճք և մտերիմ ծառայք... և շուրջ զգերեզմանաւն լինէին կամաւոր մահունք»¹:

Կիրակոս Գանձակեցին նույնը պատմում է 13-րդ դարի թաթարների մասին. նա գրում է, որ եթե մեռնողը «ի մեծաց ոք լինէր, ի ծառայից և յաղախնեաց ևս դնէին ընդ նմա ի գերեզմանի, զի սպաս կալցի ասէին նմա, այլև ձիս, զի ասէին անդ պատերազմ սաստիկ լինել»²:

Մեր պեղած համայնական դամբարանը, թեև քարե արկղ էր, նման Սևանի շրջանում գտնվածներին, բայց նա արտաքուստ հողաթումը չուներ և, որ գլխավորն է, իր ծավալով ավելի փոքր էր, քան սովորականները:

Արդ, կարող ենք միայն երկու ենթադրություն անել: Նախ այն, որ Սևանի և մեր պեղած դամբարանները տարբեր ժամանակաշրջանների են պատկանում, և ապա այն, որ նրանք միենույն ժամանաշրջանին պատկանելով, տարբեր սոցիալական շերտերի արդյունք են:

Առաջին տեսակետը ոչ մի հանգրվան չունի, որովհետև պեղված իրերի նմանությունն այնքան ակներև է, որ երբեք չենք կարող նրանք տարբեր ժամանակաշրջանների վերագրել, ուստի և մնում է երկրորդ ենթադրությունը: Այս հարցին որոշակի պատասխանելը, մեղ դեռևս վաղաժամ է թվում, քանի որ որևէ ուժեղ վաստ չունենք մեր ձեռքի տակ և մինչեւ այժմ կատարված պեղումների հիման վրա դամբարանների սիստեմատիզացիան անհնարին է կատարել: Այս հարցի լուծումը կախված է հետազա պեղումներից:

Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ մենք գործ ունենք միենույն տիպին պատկանող, բայց տարբեր գունավորում ունեցող դամբարանների հետ

¹ Մ. Խորենացի—Պատմութիւն Հայոց, գիրք Բ, գլ. Կ:

² Կիրակոս Գանձակեցի—Պատմութիւն Հայոց, Թիֆլ. 1910, էջ 259:

Եթե մեր Ն Յ Յ Պ դամբարանը կուրզանային տիպի համայնական դամբարան-ների ժամանակակից չէ, այլ նրանց հետնագարյան տիպերից մեկն է, այդ դեպքում պարզ է, որ սա քարարկղյա դամբարանների մեջ հնագույններից է և համայնական թաղումներից անհատականին անցնելու շրջանին է վերաբերում:

ԹՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Մեր պեղած հինգ դամբարաններն էլ պատկանում են միևնույն էպոխային, չնայած այն բանին, որ նրանց մեջ կար և համայնական թաղում, և նստած անհատական, և կուչ եկած վիճակում պառկած անհատական ձեւ վաղուց արդեն հնագետները դիտել են, որ «քարե արկղներում» կմախքի դիրքը կամավոր է եղել և, որ գլխավորն է, պեղված բոլոր իրերը միևնույն ժամանակաշրջանի արդյունք կարող են համարվել:

Թեև մեր դամբարաններից ոչ մի երկաթյա իր չի հայտաբերվել, բայց այնուամենայնիվ մենք այդ դամբարանները վերագրում ենք երկաթե դարի սկզբին, որովհետև ճիշտ և ճիշտ նույնատիպ իրեր անդրկովկասյան «քարե արկղներից» ստացվել են երկաթի հետ միասին: Այսուղ ճիշենք բրոնզե դաշույնի երախակալը, հերունը, սարդիոնե ուլունքները և այլն:

Համեմատելով, սակայն, մեր պեղած իրերը այլևայլ դամբարաններից ստացված իրերի հետ, դալիս ենք այն եղբակացության, որ մեր պեղած իրերի ամբողջ կոմպլեկտը արխայիկ է. ուստի, եթե Ե. Լալայանի, Ռուլերի, Ժ. Պը Մորզանի, Իվանովսկու և այլոց պեղած դամբարանները նորագույն ուսումնասիրողները վերագրում են 11—10-րդ և 9—7-րդ դարերին, ապա մեր պեղածները սլատկանելու են մի քիչ ավելի վաղ ժամանակի, որ կարող ենք համարել 12—10-րդ դ.դ. (մեր թվականությունից առաջ):

Մենք համաձայն չենք իվանովսկու, Մորզանի և այլոց հետ, որոնք երկաթե դարին պատկանող «քարե արկղները» վերագրում են մոտ 20-րդ դարին (մեր թվականությունից առաջ). Նրանց այդ կարծիքները միանգամայն հնացած են, որովհետև վերջերս Խոջալվում (Աղբբեջ. ՍՍԾ), «քարե արկղներից» հայտաբերվեց մեկում ասորեստանյան մի ուլունք, որը մասնագետները վերագրում են 11—10-րդ դ.դ. (մեր թվականությունից առաջ):¹

* * *

Այս պեղումների գլխավոր արժեքն այն է, որ նրանք անդրկովկասյան հնագիտության առաջ գրին ծարիրի գործածության հարցը Անդրկովկասի հնագույն ժողովուրդների կողմից: Եթե մինչև հիմա ծարիրը գտնված էր միայն Գանձակում և Զանգեզուրում, ապա այժմ մեր պեղումները մի նոր շրջան էլ միացրին վերոհիշյալ երկուսին: Դա հնագույն լոռին է:


Պակաս հետաքրքրական չէ նաև խեցեղենի խնդիրը: Եթե մեր պեղած կերամիկան բաղմաթիվ ընդհանուր դժեր ունի Գանձակի, Ղարաբաղի,

¹ И. И. Мещанинов. — Ирригация в халдском периоде Закавказья. Сообщения ГАИМК, № 6, 1931 г., стр. 13.

Ն. Բայազետի շրջաններում պեղած խեցեղենի հետ՝ այդ հասկանալի է, որովհետև նրանք համարյա թե ժամանակակիցներ են, չնչին տարրերությամբ:

Բայց մեր խեցեղենն իր ձևերով բավական նմանվում է նաև Գոլովինոյի (Դիլիջան) խեցեղենին, որի հետ միայն երկաթե գործիքներ են պեղվել: Այստեղ արդեն ոչ թե ժամանակադրուկան, այլ միայն տերիտորիալ կազ կարող է լինել, և դա մի ավելորդ անդամ հաստատում է խեցեղենի երկարակեցությունը, այսպես կոչված՝ նրա «կոնսերվատիզմը»: Ի վերջո, մեր խոսքը եզրափակում ենք ասելով, որ Կիրովականում պեղած հնությունները հարստացնում են մեր Պատմական թանգարանը զենքերի նոր տիպերով, որոնցից մեկը՝ № 4 դամբարանի դաշույնը՝ մինչև այժմ անհայտ էր հնագիտության: Ոսպաձև ծարիրե ուլունքները նույնպես նորություն են թանգարանի համար և, որ դլխավորն է, թանգարանը ձեռք է բերում ունիկալ մեդալյոններ: Պեղումներից հայտարերված ամբողջ մատերիալը կմտնի գիտական շրջանառության մեջ, իբրև հնագիտական լիարժեք նյութ:

808



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0406213

ЦЕНА

25Ч
1808